

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

616.9
Ա-28

Հ. Ս. Խ. Հ.
ԱՌԺՈՂԿՈՄ Ա.Տ

№ 6 ՍԵՆ-ԼՈՍՏ ԳՐԳԻՐՔՆ Պ. 6

ԲԺ. Ա. ԱՍՆՈՒՅԱՆ

ՎԵՆԵՐԱԿԱՆ
ԱԽՏԵՐ

2-րդ հրատարակումը

1917 ՊԵՏՅԱՆՍՏԱՆ, 31

== ՅԵՐԵՎԱՆ ==

30 JUL 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՒՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

№ 6 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 6

616.3

Ա-28 Ա

ԲՃ. Ա. ԱՆՆԱԲՅԱՆ

ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ

ՁԵՐԱՐՈՒՄԻ ՏՊԱՆՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1464



ԱՌՈՒՆԴԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՆԻՍԿՈՒՆ — 1981

15127-57

ՊԵՏՂՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 32
ԳՐԱՌԵՊԳԼԻԿՎԱՐ 2873 (Բ)
ՏԻՐԱԺ 4000

ՎԵՆԵՐԱՎԱՆ ԱԽՏԵՐ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Յերկու տեսակ հիվանդություններ կան: Առաջին տեսակ հիվանդություններից զերծ մնալը համարյա անհնարին է, անկախ անհատի կամքից. որինակ՝ մալարիոտ տեղ ապրելիս՝ վոչ վոք իրեն ապահոված չի համարում մալարիայով հիվանդանալուց, կամ համաճարակային հիվանդությունների ժամանակ, վորքան ել ձեռք առնեն նախազգուշական միջոցներ, ելի 100%֊ով չկա յերաշխիք չհիվանդանալու:

Յերկրորդ տիպի հիվանդությունները նրանք են, վորոնց կարող է ինքն անհատը կանխել. նրանք գոյություն չեն ունենալ, յիբե անհատը ցանկանա:

Համաճարակային և նման տեսակի հիվանդությունների դեմ գլխավոր պայքարողը պետությունն է: Պետական միջոցներով հնարավոր է համաճարակի առաջն առնել. բացում են հատուկ հիվանդանոցներ, կատարում են հողային խոշոր աշխատանքներ, ընդարձակ ու փրփած ճահիճների չորացում և այլն: Այս դեպքում հավաքական ուժերը կարող են խոշոր ու

ժանգոսի դեր կատարել. մեր յերկրի փորձըրը
ցույց են տվել, վոր մեր դյուզերից շատ շատե-
րըն ինքնաշխատանքի ու ինքնահարկման քի-
չոցներով զգալի աշխատանքներ են կատարել
և թեթևացրել մեր պետութեան բեռը:

Այնինչ յերկրորդ տեսակի հիվանդութեան
ներն աշխատի շարիքներէց են, փորոնք կարող
են գոյութեան չունենալ, յեթե մարդը ցանկա-
նա: Հարկավոր է ուժեղ կամք և ցանկութեան,
վորպէսզի անհատն ազատ մնա այս տեսակ հի-
վանդութեաններէ: Իհարկէ, այս դեպքում ես
պետութեանը մի կողմ չի քաշվում. նա չի
կանգնում մի կողմ՝ տակաւ. — «Թող յուրա-
քանչյուրն ինքը մտածի իր մասին, փոր չըճի-
վանդանա»: Այսպէս չի ատու՛ ու անու՛ մեր
պետութեանը. նա ստեղծում է անհատների
համար աշխատի սպասմաններ ու հարմարու-
թեաններ, փորոնք դյուրացնում են անհատի
աշխատանքները հիվանդութեան դեմ պայքա-
րելիս:

Վորոնք են այլ հիվանդութեանները, փո-
րոնց ճարը կարող է տեսնել ինքն անհատը, վո-
րոնց լինել-չլինելը 90%—ով կախված է ան-
հատի կամքից. յեթե ուզենա, կարող է չըճի-
վանդանալ:

Այդպիսի հիվանդութեաններին շարքին են
պատկանում նաև վեներական ախտերը:

Պայքար մղողը՝ ինչ ապարիզում էլ նա
լինի՝ նախ պիտի ուսումնասիրի, պիտի ճանա-
չի իր թշնամուն, հակառակ դեպքում կ'իվը

կանցնի սպարդյուն: Չես հաղթի, յեթե թշնա-
մադ չես ճանաչում: Ուրեմն լավ ճանաչենք
մարդկութեան ամենամեծ թշնամուն՝ վեներա-
կան ախտերը և հաղթանակը կ'իտոյ շախ ապա-
հախած կ'լինենք:

ՄԻԿՐՈԲՆԵՐ

Մարդու թշնամիները շատ են. սոսանձու-
պէս աներեւոյթ թշնամիները, աշխատեա կոչ-
ված միկրոբները: Սովորական աչքով տեսնել
միկրոբներն անհնարին է. նրանք շատ մանր են
և նրանց տեսնելու համար հարկավոր է դիտել
խոչորացնող գործիքով՝ մանրադիտակով (միկ-
րոսկոպ): Միկրոբներն այնքան մանր են և ան-
նկատելի սովորական աչքի համար, վոր միքա-
նի հազար անգամ մեծացնելուց հետո միայն,
մանրադիտակի տակ յերեւում են դնդասեղի
գլխի չափ: Այս անտեսանելի միկրոբներն են,
փորոնք առաջ են բերում տեսակ-տեսակ համա-
ճարակալին և այլ հիվանդութեաններ:

Միկրոբների տեսակներն անսահման շատ
են: Միևնույն միկրոբը չի կարող առաջացնել
յերկու տեսակ հիվանդութեաններ: Որինակ՝
վերադարձ տիֆի միկրոբն առաջացնում է մի-
միայն վերադարձ տիֆ, խոչըրայի միկրոբը—
մեմիայն խոչերա, դիֆտերիաը՝ գիֆտերիա և
այլն: Հասկանալի չէ, վոր վեներական ախտե-
րըն ևս պիտի ունենան իրենց հատուկ միկրո-
բները: Ուրեմն, քանի տեսակ վեներական ախ-
տեր կան, այնքան տեսակի յեւ յուրահատուկ

ձեկրորդներ պիտի լինեն: Մեզ հայտնի յե 3 տե-
սակի վեներական ախտեր՝ սուսանակ, վենե-
րական խոց և սիֆիլիս. ուստի կան յերեք տե-
սակ ել մանրեններ, վորոնք առաջացնում են այդ
հիվանդությունները: Յեթե մեկը վարակվում
է սուսանակի միկրոօրգանիսով, ուրեմն նա պիտի
հիվանդանա սուսանակով: Ել վոչ մի դեպքում
այդ մարդու սուսանակը չի կարող դառնալ մի
այլ վեներական հիվանդություն, ինչպես մի
ժամանակ կարծում է յին շատերը: Նույնպես և
վեներական խոցը՝ փափուկ շանկրը չի կարող
վերածվել սիֆիլիսի՝ կոչա շանկրը: Վեներա-
կան խոցի միկրոօրգանները տարբերվում են սիֆիլիսի
միկրոօրգանից այնքան, վորքան, ասենք վոչխարը՝
գայլից: Ո՞վ կխառնի վոչխարն ու գայլը. բայց
դեռ կան թերուսներ, վորոնք դեռևս խառնում
են վեներական հիվանդությունների միկրոօր-
գանները:

Ուսումնասիրենք այդ միկրոօրգանների ներգոր-
ծությունը: Սուսանակի միկրոօրգանները (գոնո-
կոկ) դասավորվում են զույգ-զույգ: Յեթե
վերցնենք յերկու լորու հատիկներ և դնենք ի-
րար մոտ տափակ կողմերով, կստանանք այն
ձևով, վորն ունի գոնոկոկը: Սրանց ածուժը
կատարվում է ուժեղ թափով: Իրարից կիսվե-
լով՝ յերկուսը դառնում է չորս, չորսը՝ 8, ու-
թը՝ 16 և այլն: Ութն անգամ կիսվելուց հետո,
վորը կարող է կատարվել շատ կարճ ժամանա-
կամիջոցում, մի միկրոօրգան տալիս է 128 միկ-
րոօր: Մոտավորապես պիտի յերեվակայել, թե

մեկ միկրոօրգանի միլիարդ միկրոօրգաններ կարող
է առաջացնել 1-2 որից հետո: Այս հանգաման-
քը դիտենալով, պարզվում է, թե ինչպես մի
միկրոօր, վորն աննկատելի յե մեզ համար, կա-
րող է առաջացնել հիվանդություն:

ՄԻԿՐՈՅԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ

Սուսանակի միկրոօրգանները կարող են ապրել,
գարգանալ ու բազմանալ միայն վորոչ պայ-
մաններում: Յեթե մեզ համար հասկանալի յե,
վոր ձուկը չի կարող ապրել սղի մեջ, իսկ
թռչունը՝ ջրի մեջ, ապա և զարմանալի չպիտի
թվա, վոր սուսանակի միկրոօրգաններն ել ապրում
ու զարգանում են գլխավորապես սեռական
գործարանների և աչքի լորձաթաղանթների
միջոց: Ասենք թե սուսանակի միկրոօրգանները տե-
ղավորվեցին մարդու սեռական անդամի լոր-
ձաթաղանթի վրա ու սկսեցին զարգանալ: Հե-
տո ինչ է լինելու: Սովորաբար յերեք որ անց,
մարդը զգում է արաստվոր բան. անդամի գը-
լուխը քոր է գալիս, մեջն սկսում է այրվել մի-
գելու ժամանակ և վերջապես միզախողովակի
միջից հոսում է թարախ: Ժամանակին կանո-
նավոր սկսած բժշկությունը տալիս է առողջա-
ցում 1¹/₂-2 ամսվա ընթացքում: Բայց կարող
են առաջ գալ նաև բարդություններ, վորոնք
ուշացնում են բուժման շրջանը: Գլխավոր բար-
դություններն են՝ ամորձիքների կամ ձվերի
բոցբոցումը, շաղանակագեղձի կամ սրտատա-
ախ բորբոքումը, վոր զանվում է ներսում, մի-

դասարկի և վերջնագրի մտտերը և վերջապես հոգեբի բորբոքում: Աւեր⁶ց չես յսի, թե նա ունի ռեվմատիզմ (մկանները, վոսկորները և այլ տեսակի): Իայց քանի՞ սր մեղքից գիտեն, վոր այդ «ռեմատիզմի» ատնվադն 60⁰/6-ը սուսանակի հետեվանք է:

Չվիկները բորբոքման յերկու դեպք կարոց և գոյություն անենալ. յերբ բորբոքում է մեկ ձվիկը, իսկ մյուսը շարունակում է իր նորմալ գործողությունը, և յերկրորդ՝ յերբ յերկու ձվիկներն ել բորբոքում են: Վերջին գեղքում տղամարդու սերմը մեծ մասամբ կորցնում է իր հատկությունները և այդպիսով չի տալիս սերունդ: Հարյուր չքեր կանանցից 56 գեղքում չքերության պատճառը լինում է տղամարդու սուսանակը:

Կանոնավոր ու ժամանակին բժշկվողը շուտ կատողջանա: Սակայն կանոնավոր բժշկությունը չպիտի հասկանայ հիվանդի ամեն սր բուժարան կամ բժշկի մոտ հաճախելը: Դա բավական չէ: Հարկավոր է ճշտիվ կատարել բժշկի տված բոլոր պատվերները՝ թիչ լինել վոտքի վրա, չուտել կծու, թթու, աղի բաներ, չխմել ողի, դինի, զարեջուր, հիվանդության շրջանում իուստիել սեռական հարաբերություններից, բնդունել նշանակած դեղորայքը ժամանակին և այլն:

Կիսաբուժված սուսանակը դանոնում է հարատեվ (քրոնիկական) և տարիների բնթացքում հարում-մաշում, ուժասպառ և անոն հի-

վանդին: Դժբախտությունը չի վերջանում դըրանով. հիվանդը վարակում է անողջին սեռական հարաբերությունների միջոցով և պատճառ դառնում ուրիշի դժբախտության: Կանանց վիժումների խոչոր տոկոսը հետեվանք են սուսանակի: Այստեղ տուժում է նաև պետությունը, վորովհետեվ պակասում է աղգարնակչության նորմալ աճումը: Վիճակագրությունը ցույց է տվել, վոր պատերազմից առաջ Գերմանիան տարեկան կորցնում էր 200.000 մարդ, շնորհիվ սուսանակի հետեվանք վիժումների: Մեղանում պակասում են վիճակագրական տվյալները, բայց խոսք չկա, վոր վիժողների թիվը մեղանում փոքր չէ:

Սուսանակի ավերումները միայն սրանով չեն սահմանափակվում: Ծննդաբերության ժամանակ յերեխայի աչքերին կաշում է սուսանակի թարախը՝ մոր սեռական գործարաններից, և յերեխայի աչքերը վարակվում են սուսանակով: Յեթե բժշկությունն ուշանա, ապա յերեխան կուրանում է: Մինչև մի տարեկան հասակի կույր յերեխաների 50⁰/6-ը պիտի վերադրել սուսանակին: Դրա համար և, վոր յուրաքանչյուր նորածնի աչքերին կաթեցնում են կաթիլներ, վորպեսզի սուսանակ յեղած դեպքում՝ միկրոսները վոչնչանան: Վորքան ել փորձ ված լինի դյուղական տատմերը, նրա համար անհասկանալի յեն մնում այսպիսի բաներ և միայն պետության կողմից ուղարկած մանկաբարձուհին է, վորը կարող է ազատել մեղ հա-

զարավոր անմեղ հույրերի բանակից. մի բան,
վոր ծանրանում է մեր բյուջեյի վրա և կլանում
է մեր ուժերի մի մասը: Այնինչ, յեթե նրանց
անսողութունը լիներ, բոլորն էլ կլինեյին ա-
վելի պիտանի քաղաքացիներ:

Յերեխաներն ևս կարող են վարակվել սու-
սանակով: Սովորութուն կա յերեխաներին քը-
նեցնել մայրերի ծոցում: Մոր հիվանդ յեղած
զեպքում՝ յերեխան դյուրությամբ կարող է
վարակվել: Թարախը, վորի մեջ լողում են սու-
սանակի միլիոնավոր միկրոբներ, մի կերպ
կաշում է յերեխայի սեռական գործարանին և
յերեխան վարակվում է:

Մի՞թե իրավացի չենք, յերբ ասում ենք,
յեթե անհատը ցանկանա, չի վարակվի մի շարք
հիվանդութուններով, վորոնց շարքին պատ-
կանում է նաև սուսանակը: Այն վայրերում,
ուր խոշոր ճահճուսներ կան, նրանց մեջ բնակ-
վող մոծակները, անկախ քո կամքից և ցանկու-
թյունից, կարող են խածել քեզ ու վարակել
մալարիայով: Բայց սուսանակի միկրոբները,
յեթե չցանկանա, չեն կարող ներս խուժել և
վարակել քեզ:

ՎԵՆԵՐԱԿԱՆ ԽՈՑ

Փափուկ շանկր, կամ ինչպես ընդունված է
այժմ անվանել վեներական խոց: Վերջին ձե-
վավորումով վերանում է յերկու հասկացողու-
թյունների խառնաշփոթութունը՝ փափուկ և
կարծր շանկրերի միջեւ: Այս յերկու վեներա-

կան ախտերը միմյանցից բոլորովին տարբեր
բաներ են: Ուրեմն փափուկ շանկրն անվանում
ենք վեներական խոց: Վեներական խոցի միկ-
րոբները կազմվում են ցուպիկների շղթայից:
Կարելի յե՛նա լավ պատկերացնել շարելով լուց-
կիներն իրար հետևից, յերկարությամբ: Այս
միկրոբներն ևս զարգանում և աճում են միմի-
այն սեռական գործարանների վրա: Յերկու-
չորս օրից հետո սեռական գործարանի վրա
գոյանում է փոքրիկ քերծվածք, վորը վերած-
վում է խոցի: Սովորաբար խոցերի քանակը լի-
նում է շատ, 2-10 հատ: Խոցերն արտադրում
են Թարախ և պատճառում են հիվանդին
ցավեր: Յեթե բացակայում են բարդութուն-
ները, վեներական խոցը բուժվում է 2 շաբաթ-
վա ժամանակամիջոցում: Բայց մոտակա ավ-
շային գեղձերը (աճուկային) հաճախ բորբոք-
վում են, վորոնք ուռչում են և նույնպես ցա-
վեր պատճառում: Հաճախ ավշազեղձերը Թա-
րախակալում են, գոյանում է այն, վոր հայա-
նի յե բուրձն անունով: Թարախակալելուց հե-
տո բուրձնը կարող է բացվել և դառնալ դժվար
ու յերկարատև բուժվող խոց: Համենայն դեպս
վեներական խոցը պիտի հաշվել տմենաթեթե-
վը վեներական ախտերի մեջ, քանի վոր խոցը
բուժվելուց հետո անհետվանք է անցնում, նա
հետք չի թողնում վոչ մի հիվանդի վրա և վոչ
էլ ընտանիքի անդամների:

ՄԻՖԻԼԻՍ

Վենեթական ախտերի մեջ սիֆիլիսը բռնում է գլխավոր տեղը, վորովհետեւ նրա բարդություններն ու հետեանքներն անսահման շատ են: Սուսանակը և վենեթական խոցն այնպիսի հիվանդություններ են, վորոնք, համեմատաբար, նվազ դեպքերում են տալիս բարդություններ մարմնի հեռավոր մասերում: Վնասվում են գլխավորապես մարմնի այն մասերը, ուր սկիզբ է առել վարակը: Բոլորովին այլ բան է կատարվում սիֆիլիսի դեպքում:

Նախ սիֆիլիսի միկրոբի մասին:

Սիֆիլիսի միկրոբը (դժգույն սպիրոխիտա) պտուտակաձեւ է: Այս միկրոբը զարգանում ու բազմանում է բոլոր տեսակի հյուսվածքներում, ուստի սիֆիլիսի խոցերը, պեծերը, բշտիկները և ուռուցքները կարող են գոյանալ մարմնի զանազան մասերում՝ ուղեղում, թոքերում, ստամոքսում, լյարդում, վոսկրներում, մաշկի ու լորձաթաղանթների վրա և այլն:

Այս է պատճառը, վոր սիֆիլիսի արտահայտությունները կարող են յերեվալ ամեն տեղ: Չկա մարմնի վրա մի տեղ, ուր սիֆիլիսի միկրոբը չզարգանա: Ասենք՝ յեթե սուսանակի միկրոբը մի կերպ ընկներ ստամոքս, նա այնտեղ չէր զարգանա, մինչդեռ սիֆիլիսի միկրոբը հաջող ու անարգել կաճեր թե բերանում, թե ստամոքսում, թե մի այլ տեղ: Բնական է

մարմնի վրա լինի մի շատ աննշան քերվածք և միկրոբի համար բացվում է ներս խուժելու ճանապարհ:

Ներս խուժելուց 21-30 որ անց, նույն տեղում, յերեվում է մի չցավող պղուկ, ապա քացվում է խոց քիչ արտաթորությամբ: Խոցը լինում է կլորածև, շուրջը բարձր և կոշտ սիներով: Այդ բարձրության պատճառով ել ամբողջ խոցն անվանվում է կայծք շանկր: Սա սիֆիլիսի առաջին շրջանն է: Ապա ուռում են սկիզբը մոտակա, հետագայում հեռավոր յեթևամաշկային ավշագեղձերը: Այս ուռուցքները ցավեր չեն պատճառում: Մոտ մեկ ու կես ամիս անց, յեթե վոչ չուտ, սիֆիլիսի միկրոբներն արդեն տարածվում են մարմնի բոլոր մասերում, վորն արտահայտվում է նորանոր խոցերի զարգացումով: Սա սիֆիլիսի յերկրորդ շրջանն է: Նախ մարմնի մաշկի վրա դուրս են գալիս կարմրա-պղնձադույն պեծեր, վորոնք կարող են դառնալ մանր-մուկր խոցիկներ: Հետո սկսում են առաջանալ խոցեր լորձաթաղանթների վրա, գլխավորապես կոկորդում և վերջնադիքի շուրջը: Այսպիսի խոցերը տարիների ընթացքում հաճախ են կրկնվում, յեթե հիվանդը չի բժշկվում: Կարող է անցնել տասնյակ տարի, և արտաքուստ չերեվան սիֆիլիսի նշանները, բայց կգա պտկման օրը, այսինքն՝ սիֆիլիսի 3-րդ շրջանը: Այս շրջանում միկրոբները շարունակում են իրենց քայքայիչ

գործը հիվանդ մարմնի ներսը: Յեթե հիվան-
դը մինչ այդ բնավ չի բժշկվել, այն ժամանակ
նրան անխուսափելիորեն սպասում է կամ պա-
րալիչ, կամ սրտի արատ (պարոկ), կամ ին-
քաշարություն և կամ այնպիսի խոց — ուռու-
ցիկների դոյացումներ (գումմա), վորոնք
քայքայում են և այլանդակում հիվանդին:
Փսոսում են վոսկորները զանազան տեղերում՝
գանգում, վոսքերում, քթում, քիմքում և այ-
լրն. գոյանում են լայնածավալ սպիւններ մաշ-
կի վրա և այլն և այլն:

Սիֆիլիսը վարակիչ է հենց առաջին շըր-
ջանից: Սիֆիլիսով կարելի չէ վարակվել մի-
ջանի ձևով՝ սեռական, արտասեռական և ժա-
ռանգաբար: Սեռական վարակման ձևը պարզ
է, տեղի չէ ունենում սեռական հարաբերու-
թյունների ժամանակ: Այդ գործողության ժա-
մանակ սեռական գործարանների իրար շփումը
բավական է վարակվելու համար: Վերջին
դեպքում սովորաբար խոցը՝ կարծր շանկրը
գոյանում է սեռական գործարանների վրա:

Վարակման մյուս ձևվը, արտասեռական
պայմանները տալիս են ավելի շատ գոհեր: Հա-
ճախ արտասեռական սիֆիլիսն անվանվում է
կենցաղային, վորովհետեւ մեր կենցաղը դառ-
նում է սիֆիլիսի տարածման պատճառը: Այս
յերբվուլթն առաձնապես աչքի չէ ընկնում
գյուղերում: Գյուղի կենցաղը, նիստ ու կացը,
սովորություններն ու դեռ գոյություն ունեցող
զանազան ծխակատարությունները պատճառ

են սիֆիլիսի տարածման: Հիշենք մի քանի
փաստեր: Ընտանիքի բոլոր անդամների մի
սենյակում համախմբվելը, ընդհանուր անկո-
ղինը 2-5 հոգու համար, ընդհանուր յերեսուրը-
բիչ բոլոր անդամների և հյուրերի համար, մի
ամանից կերակուր ուտելը, գլխալը մեկի բե-
րանից մյուսի բերան տանելը, մի ծխախոտը
հերթով ծխելը, ծամոնը բերանից բերան տա-
նելը, անըլա ամանից թեյ, ջուր խմելը և այլն
և այլն: Ահա սրանք են մեր կենցաղի պահասա-
վոր կողմերը, վորոնք տեղիք են տալիս և նը-
պաստում են սիֆիլիսի վարակի տարածման:

Հիշատակենք նաև մեր կյանքին հատուկ
մի քանի սովորություններ. գյուղի հովիվը
հերթով կերակրվում է աներում, յեթե ինքը
հիվանդ է, հերթով էլ կարող է բույրին վարա-
կել, իսկ յեթե հովիվն ինքը հիվանդ չէ, գյու-
րույամբ կարող է հիվանդանալ մի տան մեջ,
ուր կա հիվանդ, ապա ինքը հանդիսանալ սի-
ֆիլիսի տարածողը: Նույն ձևով վարակը կարող
է տարածվել ընտանիքներում, յերբ սիֆիլիսով
հիվանդ ծծմայրը կերակրում է իր կրծքով հա-
րեվանի կամ ուրիշների յերեխաներին: Լինում
և հակառակը, վոր յերեխան է լինում հիվանդ
և այդ հիվանդությունն անցնում է առողջ
ծծմորը: Մի վատ սովորություն էլ կա, յերե-
խաներին կողմնակի մարդկանց համբուրելը:
Գերմանիայում յերեխաների գոգնոցների վրա
մայրերը գրում են. — «Ինձ մի համբուրիր»:

Սենք գիտենք, վոր սովորություն կա աչ-

քի մեջ ընկած չոփը հանել լեզվով: Ինչ և լի-
նելու հիվանդի որը, յեթե «չոփ հանողը» տա-
ռապում է սիֆիլիսով: Մի Յ շաբաթից հետո
աչքի վրա պիտի դոյանա կարծր շանկը: Կամ
թե սիֆիլիսի հիվանդ տատմերը ծննդարերու-
թյունն ընդունելիս պիտի վարակի ծննդկանին:
Իսլաքներն ատամները քաշելիս իրենց ժանդո-
տած քալիաթիներով պիտի վարակեն սրան-
նրան սիֆիլիսով:

Այս ամենը հասկանալի յեն դարձնում կեն-
ցաղային սիֆիլիսի նշանակությունը: Այնու-
հետեւ պահասը գալիս լրացնում է ժառան-
գական սիֆիլիսը: Մի մեծ շարիք ևս սա յե:
Բաժանան չե, վոր մեկը վարակվելով սեռա-
կան սիֆիլիսով՝ տարածում է այս հիվանդու-
թյունը, դեռ նա յել պատճառ է դառնում սի-
ֆիլիսիկ նորածինների աշխարհ գալուն: Յեթե
տղամարդն է հիվանդ, նա վարակում է կնոջը,
այդ պեղջինս էլ արտադրում է սիֆիլիսով հի-
վանդ սերունդ:

Սիֆիլիսով հիվանդ կինը կամ ունենում
է յերեխաների վիժումներ հղության առաջին
Յ-4 ամիսներում, կամ հղության շրջանը տե-
վում է նորմալ, բայց ծնված յերեխաները մե-
ռած են լինում. կամ թե՛ կենդանի յեն ծնվում
յերեխաները, սակայն միքանի շաբաթ հազիվ
են ապրում և վերջապես յերբեմն էլ յերեխա-
ները ծնվում են կենդանի, բայց լինում են սի-
ֆիլիսով հիվանդ:

Ժառանգական սիֆիլիսով հիվանդները

մեծ մտամար այլանդակ արտաքին են ունե-
նում:

ՄՎքեր են լրացնում ավազակների, սյրո-
ֆենիտնալ գոյերի, գրպանահասաների ու մար-
դասպանների շարքերը, յեթե վոչ մարդիկ,
վորոնց ծնողները յեղել են կամ հարբեցոյներ
(ալկոհոլիստներ) կամ սիֆիլիսիկներ:

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԳՈՒՅՈՒՆՆԵՐԸ

ԲՈՒԺԵԼԻ ՅԵՆ

ՍՈՒՍԱՆԱԿԻ ՅԵՎ ՎԵՆԵՐԱԿԱՆ ԽՈՅԻ

ԲՈՒԺՈՒՄԸ

Վեներական ախտերը բուժելի յեն այն
դեպքում, յերբ հիվանդը ժամանակին դիմում
է բժշկին և բուժվում:

Քանի դեռ սուտանակը թարմ է, քանի դեռ
նրա միկրոբները չեն անցել միզախոզովակի
խորքերը, հիվանդը շուտ է ապաքինվում ու
բուժվում: Բժշկությունը միջին հաշվով տե-
վում է 6-7 շաբաթ: Սուտանակի ընթացքում
առաջացող բարդությունների դիլատոր պատ-
ճառը հիվանդն ինքն է. նա մեղսանշում է և չի
կատարում բժշկի խորհուրդները լրիվ: Վա-
րակվելու յերկրորդ որը թեթեւ գլուխ և քոք
է դգում միզանցքում, կարծելով, թե դա մի
սովորական դրգիւ է, նորից սեռական հարա-
բերություն է ունենում: Անխուսափելիորեն
հետեւանքը լինում է բարդություն՝ մի ձվի
կամ յերկու ձվերի արտադրում: Այս դեպքում
յերկարում է բուժման ժամանակամիջոցը և

հիվանդութիւնն եւ հաճախ հիմնովին չի բուժվում:

Սուսանակի ընթացքում խիստ արդելվում է վոզելից ըմպելիքների գործածութիւնը: Բայց քանի՞սն են կատարում ճշտորեն այս բանը: Նույնպես արդելվում է շատ ման դալը և ծանր Ֆիզիկական աշխատանք կատարելը: Իժպականութիւնն անդոր չէ սուսանակի բուժման ասպարիզում, միայն դժբախտութիւնը նրանումն է, վոր հիվանդը կամ ուշ է դիմում բժշկին, կամ բժշկվելիս եւ լրիվ չի կատարում բժշկի պատվերները: Դրա համար եւ քրոնիկական սուսանակ ունեցողների թիվը բազմանում է, նրանց պատճառած ավերումներն եւ մեծանում: Վոչ մի հարգելի պատճառաբանութիւն չի կարող լինել այն իմաստով, թե հնարավոր չէ բժշկի այս կամ այն պատվերը կատարել: Միայն հարկավոր է բժրանել ու դիտակցել բժշկվելու անհրաժեշտութիւնը:

Վենեբական խոցի հիմնական բուժումը տևում է 2—3 շաբաթ: Իհարկե, բարդութիւնները կարող են յերկարացնել այդ ժամանակը:

ՄԻՖԻԼԻՍԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Հարկավոր է հատուկ ուշադրութիւն դարձնել սիֆիլիսի բուժման վրա:

Յենթադրվում է, վոր մինչև 2-րդ շրջան մանելը, սիֆիլիսի բուժումը կատարվում է կարճ ժամանակամիջոցում և հիվանդի համար անցնում է անհետևանք: Դա այն շրջանն է,

յերբ ցանը դեռ դուրս չի տվել մարմնի վրա, այսինքն՝ հիվանդութիւնը դեռ չի ընդհանրացել, միկրոբները դեռ չեն տարածվել մարմնի ամեն մասերում: Ուրեմն չափազանց ուշադիր պիտի լինել և վորքան կարելի յի շուտ անցնել անմիջական բուժման, հենց վոր պարզվեց կարծր շանկրի գոյութիւնը: Յեթե՞ յուրաքանչյուր վարակվածը ճշտորեն կատարի այս պայմանը և առանց հետաձգելու սկսի բժշկութիւնը, ապա սիֆիլիսիկների բանակը զգալի կերպով պիտի նոսրանա: Սակայն դժբախտութիւնը նրանումն է, վոր կարծր շանկրի խոցը և ավշազեղձերի ուռուցքները հիվանդին չեն պատճառում ցավեր, իսկ դա պատճառ է դառնում նշանակութիւն չտալ խոցին և ուռուցքներին, վորի համար եւ հիվանդը բուժական ոգնութիւն է դիմում, յերբ սիֆիլիսը թեւով խում է իր յերբորդ շրջանը. այսինքն՝ յերբ միկրոբներն արդեն տարածվել են մեր սրգանից մի մեջ, յերբ բուժման տևողութիւնն արդեն տարիների խնդիր է դարձել: Վերջին դեպքում բուժումը կարող է տևել 2—3 տարի, վորոչ ընդմիջումներով:

Սիֆիլիսի բուժման ձևերը բազմատեսակ և բազմաթիվ են, բայց հիմնականում ամեն անդ մեկ է. այդ նպատակի համար գործ են ածվում՝ սնդիկի, բիսմութի, մկնդեղի (մըլյակ) «914» և «906» և այլ պրեպարատներ:

Սիֆիլիսի կասկածման դեպքում հարկավոր է հատուկ նշանակութիւն տալ հիվանդի

արջան քննութեան: Արջան քննութեանն ըստ Վասերմանի մի ուժեղ գենք է բժշկականութեան ձեռքում: Շատերը լատմ են և դիտեն, զոր արջան քննութեանը սիֆիլիսի վերաբերյալ տալիս է 4 խաչերից մինչև 1 խաչ և բացասական (մինուս): Բայց հիվանդները սխալ են մեկ նախաձեռնում այդ խաչերը կամ բացասականը՝ ուստի արջան քննութեան ամբողջ հետևանքը՝ լինի նա դրական, թե բացասական, կորոզ և պարզաբանել միակայն բժիշկը: Հաճախ այդ նշաններին տարբեր բացատրութեաններ են տալիս և տարբեր էլ յենթադրութեաններ անում. բայց պիտի ստենք, զոր միայն բժիշկը կարող է այդ նշանների նշանակութեանը հասկանալ և ըստ այնմ էլ վորոշել հիվանդութեան վտանգավոր լինելը: Սիֆիլիսի թարմ ժամանակ, յերբ հիվանդը լուրջ բուժման է յենթադրվում և կատարում է բժշկի բոլոր խորհուրդները, 2—3 ամսից հետո, արջան նոր քննութեանը կարող է բացասական լինել: Խաչերը կարող են չբանալ. այս դեպքում սիֆիլիսիկը չպիտի կարծե, զոր նա 1000/6-ով արդեն բուժված է, ասելով, թե «եւ ի՞նչ կա, արյունս մաքուր է»...

Անշուշտ, կարող է պատահել, զոր նա կուրացնու արդեն բուժված լինի, բայց այդ յեղբայրականումը պիտի հանի բժիշկը: Այնուամենայն դեպքեր, յերբ բժշկութեանը շարունակվում է անկախ արջան քննութեան ամբողջ հետևանքից: Վերջուպես լինում են դեպքեր, յերբ արջան քննութեանը հետևանք չի տալիս. այս դեպք-

քում հնարավորութեան կա՞ վորոշելու, թե հիվանդը սիֆիլիս ունի, թե վոչ. անշուշտ վոչ: Անհրաժեշտ է, զոր ամեն անգամ հիվանդի արջան քննութեան հետևանքը պարզի մասնապես բժիշկը:

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՅԸ

Վեներական ախտերի տարածման ընթացքի մասին դադախաբ կազմելու համար, արժե մեջ բերել մի քանի թվական ամսաշիւթ: Խորհրդային Հայաստանի վիճակագրական ամսաշիւթները, 1924 թվից մինչև 1929 թ. առաջին կեսամյակը, հետևյալ պատկերն են ներկայացնում. 3/2 տարվա ընթացքում սուսանակով հիվանդները թիվը յեղել է 14.980, զորը կազմում է վեներական ախտերով հիվանդների 460/6-ը: Ցավալին այն է, զոր յուրաքանչյուր սուսանակով հիվանդի բուժական այցելութեանները միջին թվով յեղել են 11: Այնպես զոր 11 այցելութեամբ սուսանակը չի բուժվում: Սա յի պատճառը, զոր մեզանում քրոնիկական սուսանակով հիվանդների թիվը շատ մեծ է: Ափսոս զոր մենք չունենք ամբողջ ներկայումս վիճումները մասին, բայց դադախաբ կարելու համար արժե հիշել, զոր Գերմանիայում սուսանակի հետևանքով տեղի յեն ունենում տարեկան 200.000 վիճումներ: Այս հաշվով ՀՍՍՀ-ում վիճումների թիվը հասնելու

յի տարեկան յերեք հազարից ավելի, իսկ 5¹/₂ տ. ընթացքում՝ մոտ քսան հազարի:

Նույն ժամանակամիջոցում արձանագրե-
ված վեներական խոցով հիվանդների թիվը
տվել է 761: Յուրաքանչյուր հիվանդ այցելել
և բուժ-հիմնարկ 4 անգամ:

Ինչ վերաբերում է սիֆիլիսի վիճակա-
գրության, պիտի ասենք, վոր դրությունն այս
ճակատում անմխիթար է. հարկավոր է
այս վտանգի առաջն առնելու համար լրջորեն
մասձել:

5¹/₂ տարվա ընթացքում Սորհրդային Հա-
յաստանում արձանագրվել են 16.708 սիֆիլի-
տիկներ: Սրանցից 1-ին շրջանում յեղել են՝
1280, 2-րդ շրջանում՝ 12.689 և 3-րդ շրջա-
նում՝ 2.737 հոգի:

Դուրս է դալիս, վոր սիֆիլիսի 1-ին շրջա-
նում բուժման են դիմել միայն 7.660/0: Մենք
ասել էյինք, վոր սիֆիլիսը 1-ին շրջանում ա-
վելի շուտ է բժշկվում. բայց իրականում հա-
րյուրից միայն 7—8 հոգին յեն բուժման անց-
նում անմիջապես խոցը յերեւալիս: Սիֆիլի-
տիկների ճնշող մեծամասնության, այն է՝
75⁰/₀-ի բժշկությունը տեղի յե ունենում ուշ,
ձեռքից տալով սկզբնական նպաստավոր պայ-
մանները, յերբ սիֆիլիսի միկրոբները դեռ
գտնվում են խոցին մոտակա ավշադեղձերի
մեջ և դեռ չեն անցել արյան միջով մեր օրգա-
նիզմի հեռավոր մասերը:

Պարզ է, վոր այդպիսիների բուժումը


դժվարանում է և ժամանակամիջոցն էլ յերկա-
րում: 3-րդ շրջանում բժշկվել են հիվանդներ
16⁰/₀-ը: Վերջիվերջո ի՞նչ է դուրս դալիս:
Հարյուր հոգի սիֆիլիսով հիվանդներից միայն
7—8 հոգի յեն գիտակցել և անմիջապես բուժ-
ման անցել, իսկ մնացած 92-ն իրենց ձեռքով
քայքայել են իրենց առողջությունը, պահանջ-
ված ժամանակին բուժման չգնալով: Բացի
դրանից՝ մնալով չբուժված՝ վարակը շարու-
նակել են տարածել արտասեռական ձևով:

Նույն տխուր պատկերն ենք տեսնում, յերբ
նկատի յենք առնում հիվանդների բուժայցե-
լությունների քանակը: 16.708 սիֆիլիտիկնե-
րը կատարել են 155.236 այցելություններ, այ-
սինքն՝ յուրաքանչյուր հիվանդ այցելել է բու-
ժարան 9 անգամ: Մի՞թե 9 անգամով հնարավոր
է ապաքինվել, առողջանալ սիֆիլիսից: Իհար-
կե վոչ: Պիտի արձանագրել այն տխուր յերե-
վույթը, վոր սիֆիլիտիկների մեծ մասը բուժ-
վում են այնքան, մինչև վերջանում են խոցը
և ցաների նշանները: Սոցը հենց վոր փակվում
է, հիվանդը վճռում է, թե նա արդեն առողջա-
ցել է ու էլ կարիք չունի բուժման: Այնինչ հի-
վանդությունը դառնում է գաղտնի և շարու-
նակում է իր ավերումները մարմնի ներսում,
մինչև վոր առաջանում են լուրջ բարդություն-
ներ, վորոնք լրջորեն վտանգում են հիվանդի
դոյությունը, ինչպես են՝ հոգեկան հիվանդու-
թյուններ, պարալիչներ և այլն: Սրանով էլ
պիտի բացատրել 3-րդ շրջանում գտնվողների

մեծ թիվը՝ 100-ից 16-ը: Յեթն բժշկաթյունք
ժամանակին լինեք և այն էլ կանոնախոր, հա-
ղիվ թե նրանց թիվն անցնեք 3-4-ից:

Հինգ և կես տարում վեներական ախտերով
հիվանդները վողջ թիվը Սորհրդային Հայաս-
տանում յեղել է 32.449: Յուրաքանչյուր հի-
վանդ միջին թվով այցելել է 10 անգամ: Տվյալ
թվերը վերաբերում են միայն բուժհիմնարկնե-
րում արձանագրվածներին: Իսկ յեթե սրա վրա
ափեյացնենք նաև չարձանագրվածներին ու
մասնավոր բժիշկների մոտ բուժվողներին,
այն ժամանակ մեզ մոտ վեներական ախտերով
հիվանդների թիվը կարելի չե հաշվել 40 հա-
զար: Սա մի թիվ է, վորի հանդեպ անտարբեր
մնալ չի կարելի:

Վերջացնելով մեր խոսքը, հարկավոր է
հիշեցնել ընթերցողին, վոր վեներական ախտե-
րը, ինչպես մեր ժողովուրդն է ասում, կոչող
են, պիտի գգուշանայ, վոր նրանք չկոչեն: Վե-
ներական ախտերը չեն կարող կոչել այն մարդ-
կանց, վորոնք գիտակից են և պաշտպանվում
են վարակից: Ինչ պայմաններում էլ աղբեն
մարդիկ, էլի կարող են դեբժ մնալ վեներական
ախտերից, յեթե ցանկանան: Ժանդախտն ինքն
է գալիս թաղում մեզ ստորոք, իսկ վեներալ
մեներ ինքներս խորովենք: Այս բանն
ամենքն էլ պիտի հասկանան ու րվանեն:



6536



Д-р А. Алавердян

Венерические болезни

Госиздат ССР Армении
Эривань

1931